

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ—ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՎ ՀՈՎԱՆՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Պատմահայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» սկզբում գրում է մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքերի մասին, կշտամբանքի խոսքեր ասելով նրանց «բանական հոգու անկատարության» վերաբերյալ. «...արդ՝ այն մարդկանց, որոնք չմտածեցին նույնիսկ իրենց բարիք անել և անուն ու հիշատակ թողնել աշխարհում, որքան կհարմարի մեր մեղադրանքը»[1]: Սակայն Խորենացին, հանձին իր «պատմության» պատվիրատու Սահակ Բագրատունու, մեծարում է նրանց, ովքեր մտածում են նաև այլոց բարօրության մասին, լինում են գիտության և արվեստի հովանավոր, ովքեր կռվում քաջ են ու հայրենասեր:

Սերունդների օրինական պարտքն է հիշել մեր պատմության մեջ բարի անուն ու բարի հիշատակ թողած մարդկանց: Այդպիսիներից է Հայաստանի 661—685 թթ. կառավարիչ Գրիգոր Մամիկոնյանը: Պատմիչ Ղևոնդը այսպես է հիշում նրան. «Իսկ Գրիգոր իշխանն Հայոց յաւուրս իւրոյ իշխանութեանն խաղաղացոյց զաշխարհս Հայոց յամենայն հինից եւ յարձակմանց. զի էր այր երկիւղած յԱստուածոյ, եղբայրասէր եւ օտարասէր եւ դարմանիչ աղքատաց, եւ կատարեալ ի հաւատս աստուածապաշտութեան: Եւ շինեաց նա տուն աղօթից ի գաւառն Արագածոյ ոտին ի յաւանն Արուճ՝ տաճար փառաց անուան Տեառն՝ գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»[2]:

Գրիգոր Մամիկոնյանի անվան հետ են կապված Արուճի փառահեղ Սուրբ Գրիգոր և Եղվարդի մոտ գտնվող Զորավար տաճարների կառուցումը, որոնք որքան կատարյալ են ճարտարապետական և կառուցողական տեսակետից, նույնքան էլ արժեքավոր են իրենց որմնանկարներով, որոնք լինելով կառուցման ժամանակակից, արդյունք են պատվիրատու իշխանի ճաշակի և նախասիրության:

Տակավին երիտասարդ, Գրիգոր Մամիկոնյանը 654 թվականին Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ Հայաստան ներխուժած արաբական բանակի կողմից գերվեց և երկրի անվանի մարդկանց որդիների, կանանց, երեխաների հետ (թվով 1775 հոգի) որպես պատանդ տարվեց Արաբիա: Զդիմանալով արաբական հորդաների բռնություններին ու կամայականություններին, Թեոդորոս Ռշտունուց հետո, Հայաստանի կառավարիչ դարձած Գրիգորի ավագ եղբայրը՝ Համազասպ Մամիկոնյանը, «որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր և վարժ ի բոլոր հրահանգս...»[3] և հայոց Ներսես Գ Շինող կաթողիկոսը դիմում են բյուզանդա-

[1] **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, էջ 70:

[2] **Ղևոնդ**, Արշաւանք արաբաց ի Հայս, Փարիզ, 1857, էջ 34—35:

[3] **Հովհաննես Դրասխանակերտցի**, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 88:

կան Կոստանդ II կայսրին, առաջարկելով երկիրը վերցնել իր հովանավորության տակ: Խճճված լինելով ներքին գահակալական կռիվներում, արաբները չկարողացան խոչընդոտել հայ-բյուզանդական մերձեցմանը և բավարարվեցին իրենց մոտ գտնվող հայ պատանդների դաժան սպանդով, որից միայն 22 մարդ փրկվեց, ուրիշ տեղ գտնվելու պատճառով: Դրանց մեջ էր նաև Գրիգոր Մամիկոնյանը: Արաբական խալիֆայության ներսում գահակալական կռիվները վերջացան Մուավիայի հաղթանակով, որը հռչակվեց խալիֆ (661—680), դառնալով Օմայան հարստության հիմնադիրը և մայրաքաղաք հռչակելով Դամասկոսը:

Հայաստանի կառավարիչ իշխան Համազասպ Մամիկոնյանը մահացավ 661 թվականին: Հայոց նախարարական ժողովը քաղաքականապես վերակողմնորոշվելով դեպի հզորացած խալիֆաթը, հատուկ դիմումով խնդրեց Մուավիային Հայաստանի կառավարիչ ուղարկել մահացած իշխանի կրտսեր եղբորը, պատանդության մեջ գտնվող Գրիգորին. «Մուաիա կոչէ զԳրիգոր և զՍմբատ, որ էին պատանդք ի դրանն արքունի, եւ տայր Գրիգորի զպատիւ իշխանութեանն Հայոց. եւ առաքէ զնոսա բազում մեծարանօք յաշխարհս Հայոց»[4]: Սկսվում է Գրիգոր Մամիկոնյանի քսանհինգամյա (661—685) իշխանության շրջանը, երբ նա. «մի կորովով, որ իր տոհմին էր հատուկ, կառավարում էր երկիրը», գրում է Լեոն[5]: Արամ Տեր-Ղևոնդյանը Գրիգոր Մամիկոնյանին համարում է յոթերորդ դարի Հայոց տիրակալների մեջ ամենանշանավորը[6]: Հավանաբար իր իշխանության առաջին տարում, իշխանը ամուսնանում է Հեղինեի հետ, որը Աղվանից աշխարհից էր[7]: Արուճի տաճարի արևելյան պատին, եկեղեցու հիմնադրման մասին վկայող արձանագրությունում կարդում ենք. «...հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի եւ Հեղինէի նորին զուգակրցի ի բարեխաւսութիւն շինաւղաց զսա»[8]:

Գրիգոր Մամիկոնյանը խաղաղության և անդորրության մեջ է պահում երկիրը, անգամ կատարում է որոշ բարեփոխություններ, որոնց մասին խոսում է Հովհաննես Դրասխանակերտցին. «...առաջնորդ գտեալ յոգնապատիկ **կարգաց և ուղղութեանց**, շինութեան և խաղաղութեան, ապահովութեան և բարեմասն լրութեան. որ գրեթէ յաշխարհի իբր յանապատի գալով՝ հետևեր զկնի ամենայն արդար վաստակոց»[9]:

Գրիգորը հմուտ քաղաքագետ էր: Նրա օրով Հայաստանը կարողացավ խուսանավել արաբա-բյուզանդական ավերիչ պատերազմներին մասնակցելուց, որ նրա օրոք և հայ նախարարական տների միջև չեն եղել կռիվներ ու երկպառակություններ: Սակայն Հայոց իշխանն ավելի հեռատես էր: Նա կարճ ժամանակամիջոցում շենացնում է իր նստավայր Արուճը, շինարարական խոշոր աշխատանքներ տանելով, ըստ երևույթին, երկրի կենտրոնը և կաթողիկոսարանը Դվինից Արուճ տեղափոխելու նպատակով: «Պաշտոնական մայրաքաղաքը Դվին քաղաքն էր, բայց փաստորեն Հայաստանի ամեն իշխան նստում էր իր աթոռանիստում—Թեոդորոս Ռշտունին՝ Աղթամարում, Համազասպ և Գրիգոր Մամիկոնյանները՝ Արուճում...»[10]:

Արուճը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այնտեղ և նրա մերձակայքում հայտնաբերվել են նախնադարյան, ինչպես նաև ուրարտական շրջանի բազմաթիվ հուշարձաններ: IV—V դարերում Արուճը հիշատակվում է որպես արքունի զորքերի ձմեռային կայան: Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ այն դարձավ բարգավաճ ավան, ուր իշխանը կառուցեց Սբ. Գրիգոր հսկայածավալ տաճարը, նրա հարավային կողմում իր շքեղ պալատը և պարսպապատեց երկու ձորերի հրվանդանում գտնվող ողջ ավանը: Այս շինարարական գործերի հակիրճ նկարագրությունը արել է Հովհաննես Դրասխանակերտցին: «Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեզր բարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարաձերպս վիմարդ քարանցն, որ զեզերս ունի իբրև զպսակ պատուարի: Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւ-

[4] **Ղևոնդ**, նշված աշխ., էջ 34:

[5] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 319:

[6] Անդ, ծանոթագրություն, էջ 736:

[7] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 184:

[8] Անդ:

[9] **Հովհաննես Դրասխանակերտցի**, նշված աշխ., էջ 90 (ընդգծումը մերն է—Կ. Մ.):

[10] **А. Н. Тер-Гевондян**, Армения и арабский халифат, Ереван, 1977, стр. 55.

րոյ: Շինէ նաև նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարդարեալ ըստ յարևելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ...»[11]:

Գրիգոր Մամիկոնյանի կենսագրական մի հետաքրքրական դրվագ է հիշվում վարքաբանության մեջ, կապված Դավիթ 'Իվինեցու հետ: Սուրհան անունով պարսիկ զորականը, որը ազնվականական ծագում ուներ, բայց ծառայում էր արաբական բանակում, դիմում է Հայոց իշխանին քրիստոնեություն ընդունելու խնդրանքով: Բարեպաշտ Գրիգոր Մամիկոնյանը մեծահոգաբար անձամբ դառնում է Սուրհանի կնքահայրը, նրա վրա դնելով իր հոր անունը՝ Դավիթ, և ընծայելով Կոտայք գավառի Զագ գյուղը: Մկրտությունը կատարվում է հայոց Անաստաս կաթողիկոսի ձեռքով, Արուճի տաճարի օծման օրը[12]: Մահմեդական Սուրհանի կամովին կրոնափոխ լինելն ինքնին հետաքրքիր լինելուց բացի, վկայում է նաև այն մասին, որ այդ շրջանում Հայաստանը թե՛ տնտեսապես և թե՛ մշակույթով շատ բարձր լինելով նվաճող արաբներից, ուներ և որոշակի քաղաքական ինքնություն, այլապես մահմեդականները չէին հանդուրժի իրենց հավատակցի կրոնափոխությունը[13]: Այդ ժամանակ Հայաստանում չկային ո՛չ բյուզանդական և ո՛չ էլ արաբական զորքեր: Երկիրը միայն ձևականորեն էր կախման մեջ խալիֆաթից, որի զորքերը միայն Չորրորդ Հայքում էին մնացել[14]: Պատմաբան Լեոն գրում է. «...խաղաղ ու շինարար ժամանակն ամենից առաջ հենց իրեն, Գրիգոր իշխանին էր անհրաժեշտ, նրա մեջ ներծած խոշոր կուլտուրական հակումներին բավարարություն տալու համար»[15]: Իսկապես, հեղինակավոր իշխանը չվատնեց ժամանակը աննպատակ, այլ իր ողջ ուժն ու եռանդը ներդրեց երկրում խաղաղության ու անդորրության պահպանմանը, նպաստեց երկրի տնտեսական վերելքին, շինարարության ծավալմանը: Նրա իշխանության առաջին տարիներին կաթողիկոսական գահի վրա էր նույնպիսի հակումների տեր կաթողիկոս Անաստաս Ակոռեցին (661—667): Մինչ այդ նա, Ներսես Գ կաթողիկոսի բացակայության ժամանակ, ղեկավարել էր Զվարթնոցի տաճարի շինարարությունը, իսկ կաթողիկոսության տարիներին իր հայրենի Ակոռի գյուղում կառուցում է Սբ. Հակոբ եկեղեցին: Անաստաս կաթողիկոսը զբաղվել է հայոց անշարժ տոմարի հարցերով և Անանիա Շիրակացուն հանձնարարել գրելու «Քննիկոն» դասագիրքը՝ բարձր տիպի դպրոցների համար, որի մեջ քառյակ գիտություններից բացի զետեղված էր նաև հայոց անշարժ տոմարը[16]: Պատմիչների մոտ Անաստաս կաթողիկոսը հաճախ է հիշվում Գրիգոր իշխանի հետ՝ Արուճում, տաճարը օծելիս, Աղվանից իշխան Զվանշիրին դիմավորելիս և այլն:

Որ Գրիգոր Մամիկոնյանը իրոք ուներ մշակութային հակումներ և բարձր ճաշակ, պարզ է դառնում նրա կառուցած եկեղեցիների և պալատի ուսումնասիրությունից: Արուճի տաճարը VII դարի հայկական ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից է: «Այն մի գոհար է VII դարու մեջ», գրում է Թ. Թորամանյանը[17]: Կառուցվել է 661/662—666 թվականներին[18]: Այսօր գմբեթի բացակայությունը (որը ամբողջությամբ փլվել է) բոլորովին չի խանգարում ըստ արժանվույն գնահատել տաճարի փառահեղ հորինվածքը և նրա մեծածավալ դահլիճի շինարարական կատարելությունը, որը ունենալով իր նախատիպը՝ հանձին Պտղնիի տաճարի, նույնական կրկնություն չէ բնավ: Ինչպես նկատում է Ն. Տոկարսկին, Արուճի ճարտարապետը քաջատեղյակ էր հայկական ճարտարապետական արվեստում տեղի ունեցող առաջընթացին, իսկ այդ ժամանակ նոր էր ավարտվել Զվարթնոցի շինարարությունը և «...անկասկած Ներսես Շինողի կառույցի ազդեցության տակ էր և Արուճի ճարտարապետը»[19]: Այդ ազդեցությունը, ըստ նրա, արտահայտվում է գմբեթի թմբուկի յուրա-

[11] **Հովհաննես Դրասխանակերտցի**, նշված աշխ., էջ 90—91:

[12] «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», Վենետիկ, 1810, էջ 561:

[13] Հետագայում, Գր. Մամիկոնյանի մահից հետո, Հայաստանի արաբ ոստիկաններից մեկը պահանջում է Դավթից, որ նա ուրանա քրիստոնեությունը և նորից ընդունի մահմեդականություն: Սակայն անգամ դաժան տանջանքներից հետո Դավիթը հրաժարվում է այդ անել, որի համար նրան Դվինում խաչում են: —**Մ. Օրմանյան**, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 776—777:

[14] **A. H. Тер-Гевондян**, նշված աշխ., էջ 49:

[15] **Լեո**, նշված աշխ., էջ 319:

[16] **Ա. Մաթևոսյան**, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», «ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր», 1974, № 7, 8:

[17] **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 121:

[18] **Կ. Մաթևոսյան**, Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, «ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր», 1981, № 3, էջ 85—92:

[19] **Н. М. Токарский**, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 109.

տիպ տեղադրվածության մեջ և լուսամուտների քիվերի զարդաքանդակներում, որոնք հյուսածո են, ինչպես Զվարթնոցում: Արուճի տաճարն ունի ներքին տարածության ծավալային ազդու և ամբողջական լուծում: Մեծածավալ տաճարի (16,95×34,6 մ.) բոլոր պատերը ներսից ծեփված են եղել, հավանաբար ունեցել են որմնանկարներ[20], իսկ ավագ խորանի գմբեթարդում մինչև այժմ պահպանվել է 666 թվականին նկարված որմնանկարի մի մասը: «Առանց չափազանցության կարելի է ասել,—գրում է Գ. Փուցկոն,—որ Արուճի որմնանկարը այսօր մնում է որպես ամենահիմնավոր կերպով ուսումնասիրված հայկական որմնանկարը VII դարից[21]: Իրոք, Արուճի տաճարն ու նրանում գտնվող որմնանկարը իրենց վրա են հրավիրել շատ ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն այդ գործում հիմնական ավանդը պատկանում է Լ. Ա. Դուրնովոյին, որը խորազնին ուսումնասիրության ենթարկելով որմնանկարը, 1952 թվականին դրա վերաբերյալ տպագրել է ոչ մեծ, բայց մեծարժեք մի հոդված «Стенная живопись в Аруче» վերնագրով[22]: Նրա կարծիքով Արուճի որմնանկարում տակավին զգացվում է հայկական հելլենիստական արվեստի ազդեցությունը, որը երևում է ինչպես որմնանկարի լավ պահպանված զարդագոտու և Գառնիի հեթանոսական տաճարի քանդակազարդ քիվերի նմանությունից, այնպես էլ կատարման թեթև և ազատ ոճից[23]:

Ամբողջ որմնանկարը հետևյալ կառուցվածքն ունի: Ավագ խորանի գմբեթարդում պատվանդանի վրա կանգնած Քրիստոսի պատկերն է (մոտ 7 մետր բարձրություն է ունեցել, այժմ մի մասն է պահպանված, ծնկներից մի փոքր վերև): Պատվանդանի մոտից անցնում է ամբողջ խորանը երիզող բարձրարվեստ զարդագոտին, որն ամենից լավ է պահպանված: Ներքևում, Ավագ խորանի երկու կողմի պատերին, պատկերված են եղել վեցական առաքյալներ (այժմ հյուսիսային կողմի պատին նրանցից վեցի պատկերներն են միայն պահպանվել): Քրիստոսի ձախ ձեռքին կա ոլորաններով ցած իջնող մագաղաթագալար, Հովհաննու Ավետարանից վերցված քաղվածքով («որ ունի զպատ[ու]իր[անս իմ] եւ [պահէ] զն[ոսա] նա [է] որ սիրեն [զիս եւ ո]ր սիրեն զ[իս, ս]իրեսց[ի ի հաւրէ իմմէ, եւ] ես [սիրեցից զնա] եւ երեւեցուցից նմա զիս...», գլուխ XIV, տուն 21), որի միայն մի մասն է ընթեռնելի:

Որմնանկարի վերին մասի մոտավոր վերականգնության փորձ է արել Ն. Քոթանջյանը[24]: Արուճի որմնանկարը ունի պատմա-մշակութային խոշոր արժեք, այն մեզ հասած հայկական առաջին գեղարվեստական նկարն է, որը պահպանել է նկարիչ արվեստագետի անունը: Քրիստոսի ոտքերի տակ գտնվող պատվանդանի փոքրիկ ոտքերի արանքում, նկարում օգտագործված կանաչ ներկով գրված է «Ստեփանոս»: Սակայն մակագրությունը դրանով չի ավարտվում: Ահա նրա ընթեռնելի տառերը՝ «ՍՏԵՓԱՆՈՍ Ն-Ա-ԵԱՑ[25]: Մեր կարծիքով ոչնչացած մասը պետք է վերականգնել այսպես. ՍՏԵՓԱՆՈՍ Ն[Կ]Ա[Ր]ԵԱՑ:

Արուճի որմնանկարը հասուն վարպետության հասած նկարչի ստեղծագործություն է: Այն նոր և կարևոր էջ է գրում հայկական գեղարվեստական մշակույթի զարգացման պատմության մեջ՝ իրավամբ դասվելով միջնադարյան հայ արվեստի ամենաարժեքավոր հուշարձանների շարքը: Ինչ խոսք, Արուճի տաճարի պատվիրատու և հովանավոր Գրիգոր Մամիկոնյանը հավանություն է տվել որմնանկարին, գուցե և պատկերվա՞ծ է եղել այնտեղ: Այս ենթադրությունը արվեստաբան Լ. Դուրնովոն արել է ելնելով նրանից, որ ա) Քրիստոսի պատկերի աջ և ձախ կողմերում բավական մեծ տարածություն կա (այժմ ծեփազուրկ), ուր պետք է պատկերներ եղած լինեին, բ) Քրիստոսի պատկերից դեպի աջ երևում է կապույտ գույնի թանկագին քարի նկար, որը ըստ երևույթին հագուստի մաս է զարդարել, հավանաբար ոտնամանի, գ) Եթե կենտրոնական պատկերի երկու կողմում նկարված են եղել հրեշտակներ, ապա բաց է մնում թանկարժեք քարի պատկերի հարցը, որովհետև հրեշտակների ոտքերին

[20] **Л. Дурново**, Стенная живопись в Аруче «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1952, № 1, էջ 55:

[21] **Г. Пудко**, Иконографические схемы армянских алтарных росписей VII века, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 153:

[22] **Л. А. Дурново**, նշված աշխ.:

[23] **Л. А. Дурново**, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 12. **Л. А. Дурново**, Стенная..., стр. 49.

[24] **Н. Котанджян**, Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978, стр. 42—45, иллюстрация № 54.

[25] Լ. Ա. Դուրնովոն մակագրության վերջին տառերը կարդացել է ԵԱՑ՝ (Стенная живопись в Аруче, էջ 65), սակայն որմնանկարի երկրորդ ընդօրինակության ժամանակ ընթերցելիս հնագրագետները համոզվեցին, որ վերջին տառը «Ց» է, այսինքն ԵԱՑ:

նման զարդ չէր կարող լինել, դ) Ծքեղ ոտնման կարող էր կրել իշխանը, և չի բացառվում, որ Քրիստոսի երկու կողմում պատկերված են եղել Գրիգոր իշխանը և իր կին Հեղինեն[26]:

Գրիգոր Մամիկոնյանի կառուցած և՛ Արուճի, և՛ Եղվարդի եկեղեցիները ունեցել են որմնանկարներ, դժբախտաբար իշխանի պալատը (ինչպես և Հայաստանի շատ պալատներ) այնպես է ավերված, որ հնարավոր չէ այնտեղ գոնե մեկ ամբողջական պատ գտնել: 914 թվականին Գագիկ Արծրունին Աղթամարում կառուցում է իր բարձրաքանդակներով և որմնանկարներով հրոչակված, Ս. Խաչ եկեղեցին, իսկ նրանից քիչ հեռու՝ իր պալատը, որը, ըստ պատմիչ Թովմա Արծրունու, զարդարված էր թագավորի առօրյա կյանքի (որսի, խնջույքի) կենցաղային պատկերներով[27]: Գագիկի պալատից ոչինչ չի մնացել, շատ քիչ բան է մնացել նաև Գրիգոր Մամիկոնյանի պալատից, «սակայն պետք է ենթադրել, որ նմանօրինակ (Գագիկ Արծրունու պալատ—Կ. Մ.) պալատական որմնանկարչությունը Հայաստանում միակը չի եղել»[28]: Հնարավոր է, որ այդպիսիք եղած լինեն նաև Արուճում:

Պալատի տեղում 1947—1948 թթ. պեղումներ են կատարվել Օ. Ս. Եղիազարյանի ղեկավարությամբ: Այս շինության կառուցվածքի և շինարարական նրբությունների ուսումնասիրությամբ զբաղվել է ճարտարապետության դոկտոր Վ. Հարությունյանը[29]: Գրիգոր Մամիկոնյանի պալատը և՛ իր չափերով, և՛ կառուցվածքով հիշեցնում է Դվինի կաթողիկոսական պալատը, միայն կենտրոնական սյունազարդ դահլիճում Դվինի նշված պալատի ներքին չորս զույգ սյուների փոխարեն Արուճում երեք զույգ սյուներ են եղել: Պալատի հյուսիսային՝ տաճարին նայող կողմում բացօթյա սյունազարդ ճեմասրահ է եղել: «Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում սյուների խոյակները,—գրում է Օ. Խալփախչյանը,—նրանք միանման են դվինյան խոյակների հետ, ոչ միայն հորինվածքով, այլ գրեթե նաև չափերով: Սակայն դա ընդօրինակություն չէ, այլ հին ձևերի վերամշակումը համապատասխանեցված կատարման ժամանակաշրջանին, որը արտահայտվում է զարդաքանդակների ձևավորման մեջ»[30]: Դվինի կաթողիկոսական պալատի և Արուճում կառուցված պալատի այս նմանությունը, որը երևում է նաև հատակագծերի համեմատությունից[31], անուղղակիորեն վկայում է այն մասին, որ Գրիգոր Մամիկոնյանը, մայրաքաղաքին վայել շինություններ կառուցելով, նպատակադրվել էր նաև երկրի կրոնական կենտրոնը Դվինից Արուճ տեղափոխել: Դրա պատճառը արաբ պաշտոնյաների ներկայությունն էր Դվինում:

Իշխանական պալատը Արուճում VII դարի աշխարհիկ ճարտարապետության եզակի հուշարձաններից է: Այս կառուցումներից բացի Գրիգոր իշխանը իր աթոռանիստ ավանը շրջապատում է ամուր պարիսպներով և վերաշինում արշակունյաց ժամանակներից մնացած բերդը:

Գրիգոր Մամիկոնյանի շինարարական բեղմնավոր գործունեության արգասիքն է նաև Եղվարդից երեք կմ. հյուսիս արևելք ընկած Զորավար եկեղեցին, կառուցված VII դարի 70-ական թվականներին: Եկեղեցու հարավային մասն ու գմբեթը չեն պահպանվել, փլված մասի հետ հավանաբար կորել է նաև շինարարական արձանագրությունը: Զորավար եկեղեցին ունի ութաբսիդ հորինվածք, կառուցված է դարչնագույն տուֆով: «Այս կառուցվածքը աչքի է ընկնում կոնստրուկտիվ հարցերի մշակման մեծ հմտությամբ,—գրում է Ս. Մնացականյանը,—ութ կամարները (որոնց հորիզոնական համադրումները չեզոքացնում են յուրաքանչյուրին հպված հետնախորշերով) ստեղծում են հենց այն հուսալի հիմքը, որի վրա դրվում է գմբեթը, իր ներսից շրջագծային, իսկ դրսից 12 նիստեր ունեցող թմբուկով»[32]: Հուշարձանի հարդարանքը կրում է Զվարթնոցի ազդեցությունը—նկատում է Մ. Հասրաթյանը[33]: Եվ դա ոչ միայն պատահական չէ, այլև օրինաչափ, քանի որ եթե Գրիգոր Մամիկոնյանն էր տաճարի պատվիրատուն, ապա շինության կառուցողը իշխանի ճարտարապետն էր, այն երախտավորը, որը նախագծել և կառուցել է նաև Արուճի հոյակերտ տաճարն ու պալատը և որի անունը ցավոք չի հասել մեզ: Զորավար եկեղեցին արտաքին ճակատներում ունի ութ լայն եռանկյունաձև խորշեր, որոնք

[26] Л. А. Дурново, Стенная..., стр. 64.

[27] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Երևան 1978, էջ 298:

[28] Л. А. Дурново, Краткая история .., стр. 16.

[29] Վ. Հարությունյան, VII դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ», 1953, № 8:

[30] О. Халпахчьян, Гражданское зодчество Армении, Москва, 1971, стр. 94—95.

[31] Անդ, էջ 92, 95:

[32] «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 165—167:

[33] Մ. Հասրաթյան, Զորավար, ՀՍՀ, հատոր 3-րդ, 1977, էջ 705:

արտաքին ձևավորման արտահայտիչ գործոններ են: VII դարի հայկական ճարտարապետության առավել նշանակալից հուշարձանների թվին է պատկանում Զորավար եկեղեցին:

Ինչպես ցույց է տալիս յոթերորդդարյան հայկական եկեղեցական կառույցների քննությունը, նրանց զգալի մասը ունեցել են որմնանկարներ: Զորավարի պատվիրատու և հովանավոր Գրիգոր իշխանը կառուցելով տաճարը, այն զարդարել է նաև որմնանկարներով, որոնցից այսօր շատ փոքր հատվածներ են պահպանվել: Արուճի տաճարի մասին խոսելիս նշեցինք, որ այնտեղ որմնանկարում պահպանվել է Ստեփանոս նկարչի անունը: Չի բացառվում, որ Զորավարում նույնպես աշխատել է Ստեփանոսը: «Գույնը Հայաստանի վաղ միջնադարյան գեղանկարչությունում» աշխատության մեջ Ն. Քոթանջյանը գրում է. «Եղվարդյան որմնանկարի (Զորավարի—Կ. Մ.) գունային տոնայնությունը վկայում է Արուճի որմնանկարի ներկապնակի հետ նրա ունեցած մոտիկության մասին...»[34]: Զորավարի կանգուն մնացած չորս խորաններից երեքում երևում են որմնանկարի հատվածներ, որոնք ներկայացրել են հսկայական գեղազարդեր: Սակայն թե այդ մասին ինչ է գրում Լ. Դուրնովոն. «Գրիգոր Մամիկոնյանի կառուցած Զորավարի որմնանկարը առանձնանում է բոլոր նախորդներից: ...Հնարավոր է, որ գմբեթարդում, խորանների արանքում գտնվող սյուների վրա և գմբեթում տեղադրված են եղել ուրիշ բնույթի ինչ-որ պատկերներ, բայց այն հանգամանքը, որ ավելի հարմար և երևացող տեղերը զբաղված են եղել գեղազարդերով, առաջացնում է հիմնավոր ենթադրություն, որ մնացած մասերը նույնպես պատված են եղել գեղազարդերով»[35]: Զորավարի որմնանկարի գունային կառուցվածքը քննելով Ն. Քոթանջյանը գտնում է, որ այն ունի երկակի բնույթ: Որմնանկարի հատվածներից մեկում պահպանված հագուստի պատկերի մասին նշելով, որ այն ի հակադրություն գեղազարդային մոտիվների գծային գրաֆիկական լուծման, ունի ազատ գեղանկարչական հնարքներ, ավելացնում է. «Այդ լուծումը հիշեցնում է Արուճի որմնանկարի գունային կառուցվածքի սկզբունքները»[36]:

680 թվականին խալիֆ Մուավիայի մահից հետո Հայաստանը դադարեց արաբներին հարկ վճարել: Խալիֆայության ներսում մղվում էին գահակալական արյունահեղ պատերազմներ, և Գրիգոր իշխանը իր կառավարման վերջին շրջանում 683 թվականից դարձավ երկրի լիիրավ և միակ տերը: Հայաստանը մինչև 689 թվականը ձեռք բերեց կատարյալ անկախություն[37]: Սակայն հայերին վիճակված չէր երկար վայելել խաղաղություն և հանգիստ: Դեռևս 80-ական թվականներին հյուսիսից հոնական և խազարական բազմամարդ ցեղերը սկսեցին իրենց ավերիչ ներխուժումները Անդրկովկաս: Հայոց իշխան Գրիգորի և Աղվանքի իշխան Ջվանշիրի փորձերը հոներին քրիստոնյա դարձնել, ինչպես երևում է, չտվեցին ապատված արդյունքը: Տարեցտարի ասպատակողների ջոկատները ավելի էին առաջ շարժվում: Խազարական ցեղերի մի խոշոր ներխուժում տեղի ունեցավ 684—685 թվականներին[38]: Հայրենասեր Գրիգոր իշխանը հապճեպորեն հավաքած հայկական, աղվանական և վրացական զորքերին տարավ բազմամբոխ բարբարոսների դեմ, կռվեց ինչպես առյուծ և նահատակվեց այդ կռվում հանուն հայրենիքի: «Հիւսիսային ազգն որ ասին Խազիրք... ապանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր եւ զբազումս ի նախարարացն եւ զիշխանսն Վրաց եւ Աղուանից»[39]:

Շինարար և խաղաղասեր հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը իր մեծահամբավ տոհմի բաջամարտիկ նախնիներից շատերի պես պատերազմում փառքով պսակեց իր անունը: Հայոց փորձություններով լի պատմությունը ավելի բան հարուստ է պատերազմների ու ավերմունքների, կոտորածների ու կողոպուտների դրվագներով և հիրավի, այդ պատմության մեջ հաղթանակներ են նաև խաղաղության այն ժամանակահատվածները, որոնք ձեռք են բերվել մեծաջան եռանդով ու արյամբ: Զուր չէ պատմիչ Ղևոնդը Գրիգոր իշխանի կառավարած Հայաստանի մասին գրում՝ «Եւ եղեւ բազում խաղաղութիւն յաւուրս նորա իշխանութեանն»[40]: 25-ամյա խաղաղություն, որը մեծապես նպաստեց երկրի քաղաքական հզորացմանը, տնտեսական բարգավաճմանը, գիտության ու արվեստի զարգացմանը:

[34] Н. Котанджян, նշված աշխ., էջ 51:
[35] Л. А. Дурново, Краткая история, էջ 12:
[36] Н. Котанджян, նշված աշխ., էջ 52:
[37] «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1975, էջ 355:
[38] А. Н. Тер-Гевондян, նշված աշխ., էջ 51:
[39] Ղևոնդ, նշված աշխ., էջ 35:
[40] Ղևոնդ, նշված աշխ., էջ 34: